**Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի ,,Արագածի Մ.Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց՛՛ ՊՈԱԿ-ի ,,Հասարակագիտություն ՛՛ առարկայի / 8 դասաժամ/ , ,,Պատմություն՛՛ առարկայի/ 8 դասաժամ/, ,,Ռուսաց լեզու՛՛ առարկայի /10 դասաժամ/, ,,Կենսաբանություն՛՛առարկայի /16 դասաժամ/, ,,Քիմիա՛՛ առարկայի / 7 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3/4 չափի

-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/

-անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/:

-ինքնակենսագրություն/Ձև 5/

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր/ առկայության դեպքում/

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնաակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2025թ. նոյեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 18-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Արմավիրի մարզի Արագածի Մ.Մեխակյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ.Արագած 5փ. 12 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 27 11 25 հեռախոսահամարով: